«ԼԵԳԵՆԴԱՐ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ Վ. ԱՎԱԳՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող., 65 շ., 202 բն.
էլ. փոստ՝ legendar2024@mail.ru
Հեռ. 043-362-742)

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԼԵԳԵՆԴԱՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 19.02.2024 թվականին կնքված «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-24/06» ծածկագրով գնման պայմանագրի 1.1-ին կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Տաշիր համայնքի գիշերային լուսավորության ցանցի շահագործման սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների համաձայն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվում է, որ Տաշիր համայնքի գիշերային լուսավորության ցանցի շահագործման սպասարկման ծառայություններ

Անհրաժեշտ է իրականացնել փողոցների, այգիների և զբոսայգիների փչացած, վնասված լուսատուների և լամպերի փոխարինում նորերով, վնասված մալուխների փոխարինում:

Վթարված լուսատուների, լամպերի, ավտոմատ ապահովիչների, մալուխների, ճոպանների վերանորոգում կամ փոխարինում սահմանված ժամկետներում (փոքր վթարների դեպքում մինչև 1-2 օրացուցային օր, խոշոր վթարների դեպքում մինչև 7 օրացուցային օր):

Ծառայություն մատուցողը պետք է ունենա փողոցային լուսավորության ցանցի սպասարկման աշխատանքների կատարման համար ավտոաշտարակ, երկարաձգվող, պտտվող օդային հարթակով: Բարձրացման բարձրությունը առնվազն 9մ:

Ծառայություն մատուցողը պետք է ունենա համապատասխան մասնագետներ /էլեկտրիկ, վարորդ և բանվոր/ լուսավորության ցանցի սպասարկման աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև պետք է ապահովի առնվազն մեկ կոնտակտային անձի առկայություն, որը հասանելի կլինի յուրաքանչյուր օրացույցային օր՝ շուրջօրյա:

Փոխարինման ենթակա լուսատուները, էլեկտրական լամպերը, լուսարձակները, մալուխները, ավտոմատ ապահովիչները և այլանհրաժեշտ նյութերը տրամադրում է Պատվիրատուն:

Ծառայության մատուցումը կատարողը պետք է իրականացնի Տաշիր համայնքի բոլոր բնակավայրերում:

Պայմանագրի 2.1.3-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N1 հավելվածով սահմանված պահանջներին

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Տաշիրի համայնքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի (մասնակի) հրաժարվում է կնքված պայմանագրերից համարելով այն լուծված:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից բանկային երաշխիքների ձևով, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ երաշխիքներով սահմանված գումարներից համապատասխանաբար 3450000 (երեք միլիոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ և 2300000 (երկու միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Միաժամանակ, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասը օրացուցային օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրն այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով

եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման վերը նշված գումարները (Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին), ապա Պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է.ԱՐՇԱԿՅԱՆ

ք. Տաշիր
29.03.2024